## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ–ԲԵՄԱԿԱՆՔ

● Ուր. 4 Յուլիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

● Շբ. 5 Յուլիս.— Ս. Գր. Լուսաւորչին (Ելն ի վիրապէն)։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ։ ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։ Յետոյ ձեռագիր «Տէր ողորմեա» երգուեցաւ։

● Կիր. 6 Յուլիս.— Տօն Կաթուղիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան։ Կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք» վասն Ս. Էջմիածնի, նախագահութեամբ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.ի։

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Անդաստան»ին նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

● Շբ. 12 Յուլիս.— Ս. Մեծին Ներսէսի եւ Խադայ եպիսկոպոսին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր, ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։

● Կիր. 13 Յուլիս.— Բարեկենդան Ս. Լուսաւորչի պահոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ, ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ.։

● Ուր. 18 Յուլիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

● Շբ. 19 Յուլիս.— Ս. Գրիգորի Լուսաւորչին (Գիւտ Նշխարաց)։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ ուր թաղուած է, ըստ աւանդութեան. մասունքը Ս. Լուսաւորչի. ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Աբղ. Ալճանեան։

● Կիր. 20 Յուլիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Երուսաղէմի հրէական բաժնին մէջ գտնուող Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։ Պատարագեց եւ քարոզեց տեղւոյն Տեսուչը՝ Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Ջղջանեան։

● Դշ. 23 Յուլիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս.։

● Եշ. 24 Յուլիս.— Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ (Տօն ազգային)։ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

● Շբ. 26 Յուլիս.— Ս. Տրդատայ թագ. եւ Աշխէն տիկնոջն։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր, ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

● Կիր. 27 Յուլիս.— Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ, ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան, երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան։

● Ուր. 1 Օգոստ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

● Շբ. 2 Օգոստ.— Ս. Երկոտասան առաքելոցն Քրիստոսի եւ Պօղոսի՝ երեքտասաներորդ առաքելոյն։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պօղոսի վերնամատրան մէջ, ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան։

● Կիր. 3 Օգոստ.— Բարեկենդան Վարդավառի պահոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ, ժամարարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան։

● Ուր. 8 Օգոստ.— Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ, հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան։

● Շբ. 9 Օգոստ.— Յիշատակ Տապանակին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին, ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Աբեղայ։

— Մայր Տաճարին մէջ պաշտուած Այլակերպութեան Նախատօնակին եւ անոր յաջորդող Տեառնեղբօր գահակալութեան հանդէսին նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

— Գերշ. Սրբազանը նախագահեց նաեւ գիշերակցին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէ»ի եւ Հսկման կարգերուն։

● Կիր. 10 Օգոստ.— ՎԱՐԴԱՎԱՌ (Տօն Այլակերպութեան)։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Անդաստան»ին նախագահեց Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Ջղջանեան։

● Բշ. 11 Օգոստ.— Յիշատակ մեռելոց։ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Ջղջանեան։ Հանգստեան կարգին (որ կրկնուեցաւ ապա գաւիթը, Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատր. Հօր շիրմին վրայ) նախագահեց Տ. Կիւրեղ Եպս.։

● Ուր. 15 Օգոստ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

● Շբ. 16 Օգոստ.— Թադէոսի առաք. եւ Սանդխտոյ կուսին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր, ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

● Կիր. 17 Օգոստ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ, ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան։ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. նախագահեց «Խաղողօրհնէք»ի արարողութեան։

digitised by A.R.A.R.@

● Բշ. 18 Օգոստ. — Այսօր սկսաւ Ս. Կոյսի վերափոխման տօնը կանխող հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը՝ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ։

● Շբ. 23 Օգոստ. — Եփեսոսի Ս. Ժողովոյն (431)։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածածին։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։

● Կիր. 24 Օգոստ. — Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածածին։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան։

● Դշ. 27 Օգոստ. — Առաւօտեան ժամը 2ին, Մայրավանքի մեծ զանգը ոտքի կը հանէ Հոգեշնորհ Հայրեր եւ ժողովուրդէն կարեւոր մաս մը, որոնք քիչ ետք կ'իջնեն Գեթսեմանիի ձոր, ուր Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ կը պատարագէ եւ Մայրութեան գաղափարին շուրջ կը քարոզէ Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան։ Տաճարի Տեսուչ Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեանի նախագահութեամբ, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Տաճարի հանգուցեալ Տեսուչներուն եւ լուսարարներու հոգիներուն համար։ Շատեր ստացան Ս Հաղորդութիւն։ Վանք վերադարձին՝ արշալոյս էր արդէն։

● Ուր. 29 Օգոստ. — Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Էջմիածին մատրան մէջ։ Հանդիսապետն էր Գերշ. Լուսարարապետ Սրբազանը։

● Շբ. 30 Օգոստ. — Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածածին։ Ժամարարն էր Հոգշ. Տ Գուսան Արք. Ալճանեան։

— Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գազանճեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառով» մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւն եւ Նախատօնակ։ — Գիշերասկզբին, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Ծնկեցէք» եւ Հսկման կարգեր, և ապա գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններ։ Հանդիսապետն էր Հոգշ. Տ Անուշաւան Վրդ. Զըլջանեան։ Արարողութիւնները տեւեցին մինչեւ ժամը 10։

● Կիր. 31 Օգոստ. — ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ։ Առաւօտուն, Լուսարարապետ Տ. Գարեգին Արքեպս.ի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառով» մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զըլջանեան, եպիսկոպոսական խոյր ի գլուխ։ Հանդիսապետ Սրբազանը քարոզեց, յայտնելով այն բարձր ու բացառիկ դիրքը, զոր մեր ժողովուրդը, հեթանոսական շրջանէն սկսեալ, վերապահած է իգական սեռին, և ապա նախագահեց «Անդաստան»ին։

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Անդաստան»ին և Նախատօնակին նախագահեց Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ.։

● Բշ. 1 Սեպտ. — Յիշատակ մեռելոց։ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան։ Գերշ. Լուսարարապետ Սրբազանը նախագահեց հոգեհանգստեան պաշտամունքին։

● Շբ. 6 Սեպտ. — Է. օր Վերափ.։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ Վանիկ Վրդ. Մանկասարեան։

● Կիր. 7 Սեպտ. — Ը. օր Վերափ.։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան Երաշխաւոր Ս. Աստուածածին մատրան մէջ։ Պատարագեց, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան։

● Բշ 8 Սեպտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազանը։

● Գշ 9 Սեպտ. — Ս. Յովակիմայ եւ Աննայի։ Ս Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ։ Պատարագեց, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան։

● Շբ. 13 Սեպտ. — Թովմայի առաքելոյն։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ.։

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

● Կիր. 14 Սեպտ. — Գիւտ Գօտւոյ Ս. Աստուածածնի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ։ Ժամարարն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիկեան։ Ներկայ էր մեծամասնութիւնը գաղութին։ Կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, Բշ. 8 Սեպտ.ին Տաճարի ընդհ. մաքրութեան մասնակցողներու հանգուցեալ հարազատներուն, որոնց երկար ցանկը կարդաց Տաճարի Տեսուչ Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. և յորդորեց ներկաները որ սիրոյ և համերաշխութեան ոգիով բոլորուին մեր Եկեղեցիին շուրջ, որպէսզի գաղութին վիճակը ըլլայ աւելի պայծառ ու բարգաւաճ։ Յետոյ հոգեսուրճ տրուեցաւ պարտէզը։

● Շբ. 20 Սեպտ. — Նիկիոյ Ս. Ժողովոյն (325)։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ.։

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

● Կիր. 21 Սեպտ. — Ծնունդ Ս. Աստուածածնի եւ Բարեկենդան Ս. Խաչի պահոց։ Առաւօտուն, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառով» մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար

digitised by A.R.A.R.@

ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը։

● Շբ. 27 Սեպտ. — Տօն Եկեղեցւոյ ի Նաւակատիս Ս. Խաչին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր, ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Աբեղայ Ալճանեան։

— Խաչվերացի մեծահանդէս նախատօնին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., որ ապա կենաց Փայտի մասունքը փոխադրեց Աւագ Սեղան։

— Գերշ. Սրբազանը նախագահեց նաև գիշերահսկումին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէ»ի և Հսկ տօն կարգերուն։

● Կիր 28 Սեպտ. — ՏՕՆ ՎԵՐԱՑՄԱՆ Ս. ԽԱՉԻՆ (629)։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս.։ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. նախագահեց Մելքոնեան բարերար եղբարց հոգիներուն համար կատարուած տարեկան հանգստեան պաշտամունքին։

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուած Խաչվերացի մեծ «Անդաստան»ին նախագահեց Գերշ. Լուսարարապետ Սրբազանը։

● Բշ. 29 Սեպտ. — Յիշատակ մեռելոց։ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան։ Հանգստեան կարգին (որ կրկնուեցաւ ապա գաւիթը, Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատրք. Հօր շիրմին վրայ) նախագահեց Տ. Կիւրեղ Եպս.։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Շբ. 28 Յունիս. — Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Դաւիթ Եպս. և Տիար Գ. Հինդլեան ներկայ եղան Պէյթ Հանինայի Լատինաց եկեղեցիին մէջ կատարուած ծանօթ սրտաբան Տքթ. Անթուան Տիպսիի յուղարկաւորութեան։

● Գշ. 1 Յուլիս. — Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զգլճանեան նշանակուեցաւ Հովիւ Հայֆայի և Եաֆայի հայութեան, փոխան Հոգշ. Տ. Գուսան Աբղ. Ալճանեանի, որ կոչուեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի Տեսչութեան պատասխանատու պաշտօնին։

● Եշ. 3 Յուլիս. — Կէսօրէ ետք, Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան և Հոգշ. Տ. Գուսան Աբղ. Ալճանեան ներկայ գտնուեցան Ասորի-Կաթոլիկներու Նորակառոյց Ս. Թովմաս Եկեղեցւոյ բացման հանդիսութեանց (արարողութիւն և ընդունելութիւն)։

— Քիչ ետք, Հոգշ. Հայրերը ներկայ եղան Ամերիկեան Ընդհ. Հիւպատոսին կողմէ, վաղուան Միացեալ Նահանգաց անկախութեան 210րդ տարեդարձին առթիւ, Հիւպատոսարանի պարտէզին մէջ սարքուած ընդունելութեան։ Հոն էին նաև Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. և Տիար Գէորգ Հինդլեան։

● Շբ. 5 Յուլիս. — Կէսօրէ առաջ, Ֆրանչիսկեանց Նոր Կիւսթօս Հայր Քարլօս Չէքի-Թէլլի իր առաջին այցելութիւնը տուաւ Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր

— Կէսօրէ ետք, Ասորի-Կաթոլիկներու Պատր. Փոխանորդը, որ քաղաքս կը գտնուէր իրենց նոր եկեղեցւոյ բացման առիթով, տեղւոյս իրենց Հովիւին հետ, այցելութեան եկաւ Պատրիարքարան։

● Եշ. 10 Յուլիս. — Կէսօրին, Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը, Պատրիարքարանի դահլիճին մէջ հացկերոյթ մը տուաւ Սուրբ Քաղաքի Հիւպատոսական անձնակազմին և այդ առթիւ Ս. Գլխադրի շքանշանով պատուեց Ֆրանսական Ընդհ. Հիւպատոս Ժան Կէօկինօն, որ մօտօրէն պաշտօնով պիտի հեռանար քաղաքէս։

● Բշ 14 Յուլիս. — Երեկոյեան, Ֆրանսական Յեղափոխութեան 197րդ տարեդարձին առթիւ, Ֆրանսական Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի պարտէզին մէջ սարքուած ընդունելութեան ներկայ եղան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., Աւագ Թարգման Հոգշ. Տ. Սևան Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան։

● Ուր. 18 Յուլիս. — Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. ապաքինած՝ վանք վերադարձաւ Ֆրանսական Հիւանդանոցէն, ուր շաբաթ մը առաջ ենթարկուած էր վիրաբուժական թեթև գործողութեան։

● Դշ. 23 Յուլիս. — Կէսօրէ առաջ, Մայրավանքիս մօտակայ Զօրանոցին մէջ, Մօրիս Մօյալի Հին Քաղաքի Ոստիկանապետ նշանակուելուն առթիւ եղած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Սևան Վրդ. և Քարտուղար Տիար Գէորգ Հինդլեան։

● Կիր. 27 Յուլիս. — Կէսօրին, Միացեալ Նահանգաց Փոխ-Նախագահ Ճօրճ Պուշի դիմաւորութեան, Քնէսէթի դիմացի պարտէզը գնաց Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան։

● Բշ. 28 Յուլիս. — Կէսօրէ առաջ, մեծապատիւ հիւրը այցելեց Ս. Յարութեան Տաճար, ուր դիմաւորուեցաւ 3 համայնքներու ներկայացուցիչներու կողմէ։ Մեզմէ ներկայ էին Գերշ. Տ. Դաւիթ Եպս. և Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան։

● Բշ. 4 Օգոստ. — Գերշ. Տ. Դաւիթ Եպիսկ. Սահակեան, որ տարենէ մը ի վեր կը մնար Ս. Աթոռս, վերադարձաւ Եւրոպա։

● Եշ. 7 Օգոստ. — Արևելեան Երուսաղէմի Ամերիկեան Նոր Հիւպատոսը այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

● Գշ. 12 Օգոստ. — Կէսօրէ ետք, Russian Compoundի փոքր եկեղեցիին մէջ, տեղւոյս Ռուս Միաբանութեան Նոր Մեծաւոր Հայր Փաւէլի Արշիմանտրիթի աստիճանի (տուչութիւնը կատարեց Յունաց Ամեն. Տ. Տիոտորոս Պատրիարքը) բարձրացման արարողութեան և ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպիսկ., Հոգշ. Տ. Սևան Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան։

digitised by A.R.A.R.@

## Ս. ԱԹՈՌՈՅՍ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ Է ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ստեփանոս Սալմաստեցի (Հատուածներ Նոր Ուսումնասիրութիւնից) – Յ. Ս. Անասեան։ (Արտատպուած «Սիոն» Ամսագրի 1980 և 1981 թթ. Համարներից)։ Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1981, էջ 24։

Ապաշխարութեան Շարականներ — Տ. Մասիս Քահանայ Գալստեան (վերածող)։ «Էջմիածին» Ամսագրի Խմբագրութիւն, Ս. Էջմիածին, 1986, էջ 297։

Աստուածածնի եւ Ծննդեան Շարականներ — Տ. Մասիս Քահանայ Գալստեան (վերածող)։ «Էջմիածին» Ամսագրի Խմբագրութիւն, Ս. Էջմիածին, 1986, էջ 290։

Ֆրանսերէն–Հայերէն Դպրոցական Բառարան (Աւելի քան 8000 բառ) — Խաչատուր Հ. Հէքիմեան։ Երկրորդ բարեփոխուած և լրացուած հրատարակութիւն։ Երևան, «Լոյս» Հրատարակչութիւն, 1983, էջ 271։

Հայ Գրականութիւն (Ը. Տարի) — Ս. Ս. Տարօնցի և Պ. Մ. Մարգարեան։ Երևան, Հայպետուսմանկհրատ, 1964, էջ 303։

Մաշտոցի Անուան Մատենադարան (Ուղեցոյց) — Բ. Լ. Չուգասզեան (կազմող)։ Երևան, 1980, էջ 47։

Արեւագալ — Բիւզանդ Թօփալեան։ Սփիւռքահայ Գրողներ։ Երևան, 1968, էջ 182։

Հայ Միջնադարեան Հանելուկներ (Ե.–ԺԸ. դդ.) – Ասատուր Շ. Մնացականեան։ Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1980, էջ 529։

Գիրք ի վերայ Բնութեան — Իշօխ։ Քննական բնագիրը, թարգմանութիւնը Գրաբարից Ռուսերէն և առաջաբանը՝ Ժանլլա Վարդանեանի։ Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1979, էջ 110։

Պատմութիւն Սեբէոսի — Գէորգ Վ. Աբգարեան (Աշխատասիրող)։ Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1979, էջ 446։

Թովմա Արծրունի եւ Անանուն – Պատմութիւն Արծրունեաց Տան։ Հայ Մատենագիրներ։ Ներածութիւնը, թարգմանութիւնը և ծանօթագրութիւնները Վրէժ Վարդանեանի։ Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1978, էջ 405։

Երիտթուրքերի Ազգային ու Հողային Քաղաքականութիւնը եւ Ազատագրական Շարժումներն Արեւմտեան Հայաստանում (1908–1914) – Ազատ Ս. Համբարեան։ Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1979, էջ 310։

Հայագիտական Ուսումնասիրութիւններ (Գիրք Ա) — Գալուստ Տէր-Մկրտչեան։ Երևան, Համալսարանի Հրատարակչութիւն, 1979, էջ 536։

---

● Եշ. 14 Օգոստ. — Ֆրանսական Նոր Ընդհ. Հիւպատոս Ժան Բլօտ Քուստրան իր առաջին այցը տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

● Բշ. 18 Օգոստ. — Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. մեկնեցաւ Լիբանան, 1986-1987 դպրոցական տարեշրջանի համար ժառանգաւոր սաներ արձանագրելու։ Վերադարձաւ Բշ., 8 Սեպտ.ին։

● Ուր. 29 Օգոստ. — Ս Երկիր այցելող Ս. Գրքի բանասէր Գերմանացի փրօֆէսէօրներու ի պատիւ, Լուտերականներու սրահին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զիլջանեան, Հոգշ. Տ. Բարսեղ Վրդ. Գալէմքէրեան և Տիար Գ. Հինդլեան։

● Դշ. 9 Սեպտ. — Երեկոյեան, Մոսկուայի Ռուսաց Պիմէն Պատրիարքի անուան տօնին առթիւ, Russian Compoundի մէջ, Ռուսաց Նոր Մեծաւորին կողմէ տրուած ընդունելութեան ներկայ եղան Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Տ. Սևան Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան։

● Եշ. 11 Սեպտ. — Իսրայէլի Վարչապետ Շիմօն Փէրէսի Եգիպտոս մեկնումին առիթով, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. ողջերթի գնաց Պէն-Կուրիօն օդակայան։

● Դշ. 24 Սեպտ. — Կէսօրէ ետք, Յոյն-Կաթոլիկներու եկեղեցւոյ կից սրահին մէջ կայացած Արևելեան Եկեղեցիներու Ցուցահանդէսի բացումին ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան։

digitised by A.R.A.R.@